ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«02» դեկտեմբերի 2024թ. No 10/1-գ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԴԻՋԻԲԵՅՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ **ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/6**

Մասնակից՝ «ԴԻՋԻԲԵՅՍ» **ՍՊԸ**
/ՀՎՀՀ՝ 01039106, գործունեության հասցե՝ ք. Երևան, Փավստոս Բուզանդ Փ 15 հարկ 4, տարածք 34/

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, իր կարիքների համար տվյալների պահոցների ձեռքբերման նպատակով, 28.10.2024թ. հրապարակել է էլեկտրոնային աճուրդով գնման հայտարարություն և հրավեր:

12.11.2024թ. հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/6 ծածկագրով գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ համակարգի կողմից որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչված «ԴԻՋԻԲԵՅՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերեի պահանջներին՝ մասնավորապես. առաջարկված ապրանքի մակնիշը (Huawei OceanStor 2200) թերի է, ամբողջական չէ, ուստի արտադրողի պաշտոնական կայքում առկա ապրանքների ցանկից հնարավոր չէ այն գտնել և ստուգել տեխնիկական հնարավորությունները՝ հայտը գնահատելու համար, ինչպես նաև ապրանքի տեխնիկական բնութագիրը լրացված է ոչ հստակ չափորոշիչներով՝ կիրառված է «առնվազն» բառերը: Գնահատող հանձնաժողովը ընթացակարգը կասեցրել է մեկ աշխատանքային օրով և «ԴԻՋԻԲԵՅՍ» ՍՊԸ–ին առաջարկել շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

14.11.2024թ. հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/6 ծածկագրով գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ մասնակիցը, հրավերով սահմանված ժամկետում ներկայացրել է շտկված տեխնիկական բնութագիր, որի ուսումնասիրությամբ գնահատող հանձնաժողովը պարզել է, որ «ԴԻՋԻԲԵՅՍ» ՍՊԸ-ի կողմից չի նշվել հստակ առաջարկվող մոդել, քանի որ ուսումնասիրելով արտադրողի պաշտոնական կայքը https://huawei.com նկատվել է որ չկա Huawei oceanstor 2200&2600 մոդել այլ կա այդպիսի մոդելների ընտանիք օրինակ՝ Huawei OceanStor 2200 v3, Huawei OceanStor 2200 v5, Huawei OceanStor 2200 v6, Huawei OceanStor 2600 v3, Huawei OceanStor 2600 v5, Huawei OceanStor 2600 v6: Նշված բոլոր տարբերակները իրենցից ներկայացնում են տարբեր ապրանքներ և ունեն տարբեր տեխնիկական նկարագրեր: ՈՒսումնասիրելով պաշտոնական կայքը և ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/6 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղարի պաշտոնական էլեկտրոնային փոստին «ԴԻՋԻԲԵՅՍ» ՍՊԸ-ի կողմից ուղարկված տեխնիկական նկարագրերը հանձնաժողովը գտել է, որ առաջարկվող մոդելը չի համապատասխանում հայտով պահանջված տվյալների պահոցի տեխնիկական բնութագրին՝ մասնավորապես. առաջարկվող ՏՊՀ-ը պետք է ունենա Flash/Read քեշ-ի աջակցություն: Read cache-ի ծավալը՝ առնվազն 7.5 TB: Պետք է աջակցի ռեալ ժամանակում Tiering –ի մեխանիզմ մեկ pool-ի տարբեր տեսակի կրիչների միջև: Առաջարկվող ՏՊՆ պետք է ունենա RAID 1, RAID 1+0, RAID 5, RAID 6 աջակցություն – չունի RAID 1, և այլն ...: Հաշվի առնելով վերոգրյալը և այն, որ համակարգով ներկայացված «ապրանիքի ամբողջական նկարագիր» դաշտում լրացված տեխնիկական բնութագիրը համընկնում է հրավերով ներկայացրած տեխնիկական բնութագրին (հավանաբար լրացվել է պատճենման եղանակով), բացառությամբ «2 x Huawei OceanStor2200»-ի, հանձնաժողովը որոշել է հրավերի պահանջների նկատմամբ հայտի տեխնիկական բնութագրի համապատասխանության վերաբերյալ իրավական դիրքորոշում ստանալու նպատակով գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնել, և 15.11.2024թ. հարցում է կատարել իրավաբանական վարչություն:

21.11.2024թ. իրավաբանական վարչությունից ստացվել է դիրքորոշում առ այն, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հրավերով նախատեսված է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ներառյալ՝ առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մոդելը, արտադրողի անվանումը (ապրանքի ամբողջական նկարագիրը), ինչի պահանջը կատարվել է մասնակցի

կողմից, սակայն գնահատող հանձնաժողովի կողմից արտադրողի պաշտոնական կայքի (https://huawei.com) ուսումնասիրման արդյունքում չի հայտնաբերվել մասնակցի կողմից առաջարկվող Huawei oceanstor 2200&2600 մոդելը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Հրավերով նախատեսված չէ մասնակցի կողմից հայտով ներկայացված տեղեկատվության՝ Հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին համապատասխանությունը՝ գնման առարկայի կոնկրետ աղբյուրի կամ պաշտոնական կայքի (արտադրողի կայքի) միջոցով ստուգելու պահանջ, ուստի հայտնում ենք, որ գնահատող հանձնաժողովի համար գնման առարկայի բնութագիրը գնահատելիս կարող է հիմք ընդունվել հնարավոր ցանկացած աղբյուր, ինչի ուսումնասիրման արդյունքում համապատասխան մոդելի առկայության վերաբերյալ տեղեկատվության բացակայության դեպքում մասնակցի հայտը ենթակա կլինի մերժման՝ հստակ նշելով մոդելի առկայության վերաբերյալ ուսումնասիրված բոլոր աղբյուրները:

21.11.2024թ. հաշվի առնելով վերոգրյալը և ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/6 ծածկագրով գնման հրավերի 8.11 կետի պահանջները գնահատող հանձնաժողովը որոշել է «ԴԻՋԻԲԵՅՍ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

1. Հիմնավորում և եզրահանգում

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով որոշում եմ՝ «ԴԻՋԻԲԵՅՍ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

12/2/2024

X

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN EDGAR 4010690054

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am